

ՄԵՊՏԵՄԲԵՐ 2021

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	6
1.3. Ջրահեռացման համակարգ .....	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	8
1.5. Էներգահամակարգ .....	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	9
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>10</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	11
2.2. Հասույթ .....	11
2.3. Գանձում .....	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	13
2.5. Ջրաչափեր .....	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	15
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>16</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	20
3.5. Գոտիավորման աշխատանքներ .....	21
3.6. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	25
3.7. 1-85 թեժ գիծ .....	26
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>27</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>30</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	31
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....	31
5.3. Դասընթացներ/սեմինարներ .....	31
5.4. Բուժզննում .....	32
5.5. Համագործակցություն ՀՀ ԱԻՆ-ի մարզպետարանների հետ .....	33
5.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	33
<b>6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>34</b>
6.1. Համակարգչային ցանց .....	35
6.2. Ինտերակտիվ համակարգ .....	35

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Մարզ Արարատ

● Մխչյան համայնքի Երկաթուղայինների փողոցով անցնող  $d=50$ մմ  $L=100$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային անորակ ջրագիծը, որի վրա առկա էին բազմաթիվ վթարներ, «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է նոր  $d=50$ մմ  $L=100$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Արդյունքում, ջրի ճնշման կարգավորման հետևանքով կրճատվել են կորուստները:



● Մխչյան համայնքի Շահումյան փողոցի  $d=50$ մմ երկաթե քայքայված ջրագիծը «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է նոր  $d=50$ մմ  $L=680$ գծ/մ և  $d=63$ մմ  $L=100$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Փոխարինվել են թվով 29 բնակիչ-բաժանորդների անհատական միացումները  $d=20$ մմ  $L=400$ գծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով, իսկ ջրաչափերը տեղափոխվել են տարածքից դուրս ջրաչափական դիտահորերում:



● Վերին Արտաշատ համայնքի Մայաթ-Նովա փողոցի  $d=50$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է  $d=50$ մմ  $L=150$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Փոխարինվել են թվով 11 բնակիչ-բաժանորդի անհատական միացումները  $d=20$ մմ  $L=100$ գծ/մ պոլիէթիլենային խողովակներով, իսկ ջրաչափերը տեղափոխվել են տարածքից դուրս տեղադրված ջրաչափական դիտահորերում: Իրականացված աշխատանքների արդյունքում կարգավորվել են ավելցուկային ճնշումները, երկարացվել են ժամային գրաֆիկները, գրանցվել է հասույթի աճ:

### Մարզ Սյունիք

● «Մեդրի» տեղամասի աշխատակիցների կողմից լվացվել և ախտահանվել են  $2 \times 200$  խոր. մ տարողությամբ Ագարակի ՕԿՁ-ները:



## Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Խաղաղ Դոնի փողոց 5 հասցեում D=150մմ L=6գծ/մ երկարությամբ շարքից դուրս եկած կերամիկական կոյուղագիծը փոխարինվել է d=150մմ L=6գծ/մ երկարությամբ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով:



## Մարզ Գեղարքունիք

● Քաղաք Սևան, Կարմիր բանակի փ. 35 հասցեի D=150մմ L=30գծ/մ երկարությամբ շարքից դուրս եկած կոյուղագիծը փոխարինվել է d=150մմ L=30գծ/մ երկարությամբ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, կառուցվել է թվով 1 դիտահոր:

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	5194
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	33330
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	29920
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	15750
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	34
Շահագործումից հանված ջրագիծ	մ	6990
Կառուցված ջրագիծ	մ	3214
Կառուցված կոյուղագիծ	մ	449.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	36
Փոխարինված փական	հատ	55
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	519
Մաքրված դիտահոր	հատ	740
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	44.3
<b>Վերացված վթարներ</b>	<b>Չափման միավոր</b>	<b>Քանակ</b>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1579
Ջրահեռացման ցանցում	հատ	2499
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	541

Սեպտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	958	1091	537

## 1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է սեպտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	239	11	1	2	1	1	0	0	0	255
Փոխարինված	215	10	5	1	1	4	1	1	2	240
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	310	40	1	4	4	4	3	1	2	369
Ընդամենը	764	61	7	7	6	9	4	2	4	864

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր է տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 864 ջրաչափ: Կատարված աշխատանքների 88 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ՋՐԱՇԵՌԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1995	267	6
2	Սաշտոց	1380	236	16
3	Շահումյան	700	140	44
4	Զեյթուն	770	228	0
5	Շիրակ	660	542	50
6	Արթիկ	40	92	0
7	Ապարան	0	29	0
8	Ալավերդի	2810	26	6
9	Աշոցք	0	7	0
10	Բերդ	0	6	9
11	Իջևան	1470	60	18
12	Լոռի	3220	212	0
13	Նոյեմբերյան	10	23	0
14	Սպիտակ	0	18	0
15	Ստեփանավան	1710	39	0
16	Թալին	0	24	0
17	Տաշիր	260	9	0
18	Չարենցավան	840	122	0
19	Աբովյան	3800	93	0
20	Հրազդան	1310	122	80
21	Կենտրոն	190	187	24
22	Հյուսիս	3050	201	0
23	Հարավ	1110	271	10
24	Էրեբունի	590	151	5
25	Արմավիր	5415	121	3
26	Արտաշատ	0	92	6
27	Էջմիածին	0	26	200
28	Աշտարակ	3000	76	0
29	Արարատ	895	82	0
30	Մասիս	773	41	0
31	Գավառ	260	18	0
32	Սևան	2528	66	42
33	Մարտունի	0	21	0
34	Վարդենիս	80	12	0
35	Ճամբարակ	0	17	0
36	Դիլիջան	90	33	0
37	Վայք	0	5	0
38	Եղեգնաձոր	0	8	0
39	Զերմուկ	0	32	0
40	Սիսիան	210	54	12
41	Գորիս	30	43	1
42	Կապան	0	82	0
43	Մեղրի	0	31	0
	Ընդամենը	39196	3965	532

### 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. Սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում կտրվել էր ենթակայանը սնող բարձրավոլտ օդային մալուխը: Ամբողջ գիծը հոսանքազրկելուց հետո այն վերականգնվեց: Վնասվել էր նաև ենթակայանի բարձրավոլտ մեկուսիչը, որը ևս փոխարինվեց նորով և այժմ ենթակայանը աշխատում է բնականոն ռեժիմով:

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում ավազը տեղափոխող կոնվեյերի պոլիէթիլենե պաշտպանիչ պատյանները մաշվել էին: Այն ապամոնտաժվեց և փոխարինվեց նորով և այժմ աշխատում է բնականոն ռեժիմով: Կատարվեց նաև բոլոր սարքավորումների զննում և կարգաբերում:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում փոխարինվեցին օդամուղների օդի ֆիլտրերը, որոնք արդեն ամբողջովին խցանվել էին: Խաթարվել էր ամբողջ տարածքի լուսավորությունը, որի պատճառը էլեկտրական թոխարկիչն էր, որն էլ փոխարինվեց նորով:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում գտնվող պոմպակայանի վրայի պողպատե թիթեղները կոռոզիայի էին ենթարկվել, որոնք էլ մաքրվեցին կոռոզիայի շերտից և ներկվեցին հակակոռոզիոն ներկով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	60,627	30.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	76,232	18
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	156,849	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	133,632	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	119,451	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16,209	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,962	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	31,200	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,402	0	0

### 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	73
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	36
Այցեր	2
Պոմպի տեղադրում	2
Պոմպի ապամոնտաժում	2
Պոմպի վերանորոգում	1



## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար սեպտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 12 մեքենայի շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 2 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:



Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիփսեր, առանցքակալներ, կիսաստիններ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 23 անվաղող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Փոխարինվել են թվով 57 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

Թվով 4 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 7 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 2 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 3 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամսանիփսերը, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 6 մեքենայի վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա:

Թվով 7 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Կատարվել է թվով 6 մեքենամեխանիզմի թափքի նորոգում:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.10.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 559,905 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. սեպտեմբերին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	652,303	535,325	82,1
	Իրավաբանական անձ	29,872	24,582	82,3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	729,377	576,704	79,1
	Իրավաբանական անձ	35,121	25,598	72,9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 1002 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3021 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 09.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1155	1303	229	2687
	Իրավաբանական անձ	143	160	31	334
	Ընդամենը	1298	1463	260	3021

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ սեպտեմբեր ամսին փոխարինված 3021 ջրաչափերի մոտ 57%-ը (կամ 1723 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 170,971 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Սեպտեմբեր ամսին գանձումը կազմել է 2,255 մլն դրամ (96 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. ապրիլ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝

փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսագանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը սեպտեմբեր ամսին զերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները): Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Սեպտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 154 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 19,3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10860	1514557109	7424	771764134	158	20991281	3278	721801694	4325	385826411


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 68 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.10.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,642	2,277
Բնակիչ-բաժանորդներ	6,387	1,528
Իրավաբանական անձեր	2,255	749

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 284.7 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:



## 2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.10.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	696,157	575,081	82.61	34,007	25,588	75.24
	Առանց ջրաչափի	33,220	1,623	4.89	1,114	10	0.90

Տվյալների բազայում 01.10.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	868,112	389,380	44.85	37,893	10,482	27.66

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում՝ թաղամասային ծրագրով) շուրջ 4864 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1114 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2350	1925	81.9
գ.Պոռշյան	1587	1058	66.4
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5887	1840	32.3

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 9676, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8878, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1316, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2107, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1311, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1830 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3909 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	320	206,130	33,952,273

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ






### 3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի սեպտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը, որը կազմել է՝ 96.6%, ինչը 0.1% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 28 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը ստոյ Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի սեպտեմբեր ամսին 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 197 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 96 հազար կՎտ-ով ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում Է.Էնեզիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 16701 ԿՎտ/ժ. (3.51%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ, ինչը պայմանավորված է եղանակային շոգ պայմաններով:

Երևան քաղաքի բակային պոմպեր




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

#### Ուսումնասիրված հասցեներ

● Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 59 հասցե: «ՀԷՑ» ՓԲ ընկերությունից ձեռք է բերվել 3 տեխնիկական պայման: Պոմպակայանների ստուգայցերի և էլ. հաշվիչների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է հոսանքի տրանսֆորմատորի գործակցի անհամապատասխանելիություն (Ջրվեժ բանավան պ/կ) և հավելագրում (Պարոնյան 1 պ/կ): Երկու դեպքում էլ կազմվել է արձանագրություն, փաստը փոխհատուցվել է:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների էլ. էներգիայի ծախսը նվազել է 1164.57կՎտ/ժամ 5,6%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 5281 կՎտ/ժամ 18,5%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




**Կատարված աշխատանքներ**

- Թվով 38 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 21 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:
- Թվով 384 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 272 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

**Ինվերտորների տեղադրում**

- Վեց հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:
- Երկու հասցեներում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր

Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 14522,81 կՎտ.ժ կամ 19,28%:




**Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ**

- Հաշվետու ժամանակահատվածում 20 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


Մեպտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 126, 787 ԿՎտ/ժամ (6.63%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա**




- Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 100,390 ԿՎտ.ժ/ամիս կամ 4,20 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

**Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա**



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 98 584 ԿՎտ.ժ կամ 1,81 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են սեպտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	62
Գյուլմրի քաղաքի կոյուղագծերի թվայնացում	քաղաք	1
Մարզային կոյուղագծերի երկարությունը թվայնացումից հետո	կմ	1364,97
Երևան քաղաքի կոյուղագծերի երկարությունը փոփոխության արդյունքում	կմ	1757,29
Երևան քաղաքի ջրագծերի թվայնացում	քաղաք	1
Համայնքների տվյալների միավորում GIS համակարգում	համայնք	4
Արագածոտն մարզի ջրատարների տվյալների միավորում ընդհանուր տեղեկատվական բաժին	մարզ	1
Գյուլմրի քաղաքի, ներքին ցանցի հորերի և փականների մուտքագրում	քաղաք	1
Կենտրոն տեղամասի վթարների քարտեզագրում և մուտքագրում ԱՏՀ-ում	վթար	83
Պոմպակայանների ակտիվների գնահատում դաշտային այցելության միջոցով	պոմպակայան	5
Արմավիր պ/կ ակտիվների գնահատման աղյուսակների լրացում և ակտիվների գնահատականների ստացում	պոմպակայան	1
ՕԿՋ ներքին տեղադիրքերի և սխեմաների վերաբերյալ ԱՏՀ տվյալների բազայի ստեղծում	բազա	1
Լոռու մարզի Շնող գյուղի թվայնացում ԱՏՀ-ում՝ հիմք ընդունելով AutoCad ծրագրի կատարողական գծագրերը	գյուղ	1
Լոռու մարզի Օձուն գյուղի թվայնացում ԱՏՀ-ում՝ հիմք ընդունելով AutoCad ծրագրի կատարողական գծագրերը	գյուղ	1
Լոռու մարզի Հաղպատ գյուղի թվայնացում ԱՏՀ-ում՝ հիմք ընդունելով AutoCad ծրագրի կատարողական գծագրերը	գյուղ	1
Լոռու մարզի Սպիտակ քաղաքի թվայնացում ԱՏՀ-ում՝ հիմք ընդունելով AutoCad ծրագրի կատարողական գծագրերը	գյուղ	1
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	358
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	9

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### Ջինջ ակներ/Չլկաններ

Թալինի «Չլկաններ» համակարգի ջրաքանակի նվազման պատճառով այցելություն է կատարվել նշված տարածք պարզելու ջրաքանակի նվազման պատճառը: Ամբողջ տարածքը գնելու ընթացքում պարզվել է, որ հովիտների միջամտությամբ ջուրն ուղղվել է մոտակա ձորակ: Նշված թերությունը կարգավորելուց հետո ջրաքանակն ավելացել է 7լ/վ-ով:



**Շոր-Շոր-Երևան**

Ջրատարի շրջանցման նպատակով կազմակերպվել է ջրատարի կանգառ, որի ընթացքում «Մաշտոց» ՇՏ-ի կողմից Երզնկա գյուղում տեղադրվել է ճնշման կարգավորիչ՝ տվյալ թաղամասի ջրի ավելցուկային ճնշման նվազեցման համար:



**«Արզնի» սանիտարական գոտի**


«Արզնի» սանիտարական գոտու կապտաժների ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ դրենաժային խողովակների միջև առկա են ծառի արմատներ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ «Ջրառ» սանիտարական գոտու աշխատակիցները մաքրել են 3 կապտաժների դրենաժային խողովակները արմատներից ու քարերից:



**3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

**Քաղաք Գյումրի**

● Ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Կարսի խճուղի-Տեր-Գաբրիելյան փողոցների խաչմերուկով անցնող D=500մմ Վարդ-Բաղ ջրատարից սնուցվող ջրագծի վրա, որը պետք է հանվեր շահագործումից, քանի որ Տեր-Գաբրիելյան փողոցով KFW բանկի ֆինանսավորմամբ անցկացվել էր նոր D=160մմ ՊԷ ջրագիծ և դրանով իսկ իրականացվում էր ջրամատակարարում:  
Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=500մմ L=360մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է մոտ 10 լ/վ ջրաքանակ:



● Ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի 26 Կոմիսարներ փողոցում տեղի ունեցած վթարված պողպատե ջրագծի վրա: Քանի որ նշված փողոցում անցկացված է նոր ջրամատակարարման ցանց, ուստի նշված ջրագիծը պետք էր միացման տեղը որոշելուց հետո խցափակման եղանակով հանել շահագործումից: Գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է միացման տեղը և Շիրակ տեղամասի կողմից այն հանվել է շահագործումից: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է  $D=100$ մ  $L=320$ մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է մոտ  $Q = 2$  ր/վ ջրաքանակ:



● Ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Գերցն 2 հասցեում տեղի ունեցած վթարը, որն առաջացել էր հենց տան տակ: Ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ վթարվել էր  $D=40$ մ պողպատե ջրագիծը, որն անցնում էր բնակելի տան տակով: Վթարավերականգնողական աշխատանքների անհնարինության պատճառով վթարված  $D=40$ մ  $L=80$ մ ջրագիծը հանվել է շահագործումից: Փոխարենն անցկացվել է նոր  $D=40$ մ ՊԷ  $L=70$ մ ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է  $Q = 1$ ր/վ ջրաքանակ:



### Մևան քաղաք

● Նալբանդյան փողոցում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Նալբանդյան 26 շենքի մոտով անցնող  $d = 50$ մ պողպատե ջրագծի վրա: Կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում տնտեսվել է  $Q = 7$ ր/վ ջրաքանակ:



● Մևան-Գավառ M10 մայրուղու վրա կատարված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար մայրուղով անցնող  $D= 50$ մ ՊԷ ջրագծի վրա: Կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում տնտեսվել է  $Q = 5$ ր/վ ջրաքանակ:



● Լճաշեն-Սևան ջրատարի վրա իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է պողպատե  $D=100$ մմ օդահեռ փականի վթար: Ձեռնարկված վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում վթարը վերացվել է տնտեսելով 3լ/վ ջրաքանակ:



● Լճաշեն գյուղում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար 26 փողոցով անցնող  $D = 160$ մմ պ/է ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 5$ լ/վ:



● Վարսեր գյուղում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է թվով 3 վթար նույն  $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Ընդհանուր տնտեսումը կազմում է  $Q = 3.5$ լ/վ ջրաքանակ:



### Քաղաք Վարդենիս

● Վարդենիս քաղաքում ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել է թվով 2 վթար քղլեջի մոտ գտնվող  $D=400$ մմ և գերեզմանատան մոտ գտնվող  $D=200$ մմ ջրագծերի վրա համապատասխանաբար: Ընդհանուր տնտեսումը կազմել է  $Q \approx 4$ լ/վ ջրաքանակ:



### Քաղաք Հրազդան

● Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում կատարված աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է  $D=500$ մմ ջրատարից միացված անասնախմոցի համար ապօրինի միացում: Հրազդան ՇՏ-ի կողմից կատարվել է ապօրինի միացման ապամոնտաժում:



### Գյուղ Գուգարք

● Պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել Գուգարք գյուղի 14 շենքը սնուցող ջրագիծը: Հետագա շահագործումն անխափան կազմակերպելու համար փոխարինվել է  $D=40$ մմ,  $L=15$ մ ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է  $Q = 1$ լ/վ ջրաքանակ:



## Քաղաք Սպիտակ

● Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյանի 2,3,4 շենքերի ջրագիծը, կառուցված լինելով դեռ ԽՍՀՄ տարիներին, գտնվում էր վթարված վիճակում: Հետագա շահագործումն անխափան կազմակերպելու համար փոխարինվել է շենքերին սնուցող ջրագիծը  $D=40$ մմ  $L=80$ մ: Արդյունքում տնտեսվել է  $Q=1$ լ/վ ջրաքանակ:



## Քաղաք Չարենցավան

● Չարենցավան քաղաք կատարած ստուգայցի արդյունքում հայտնաբերվել է վթար Արգել համայնքի խաչքարերի մոտ գտնվող  $D=100$ մմ ջրագծի վրա: Վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում տնտեսվել է  $Q=3$ լ/վ ջրաքանակ:



## Քաղաք Երևան

● Հերացի փողոցում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Հերացի 18 հասցեի մոտ գտնվող և անհայտ ուղղությամբ գնացող  $D=50$ մմ ջրագծի վրա: Կատարվել է նշված ջրագծի խցափակում և տնտեսվել է  $Q=5$ լ/վ ջրաքանակ:



● «Ձեյթուն» տեղամասի Վարշավյան փողոց կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է թվով 2 վթար՝ առաջինը  $D=200$ մմ պողպատե, իսկ երկրորդը նշված ջրագծից սնվող  $D=32$ մմ մետաղապլաստե ջրագծի վրա: Երկու վթարներն էլ վերացվել են տնտեսելով ընդհանուր  $Q=9$ լ/վ ջրաքանակ:




● «Շահումյան» տեղամասի Սեբաստիա փողոց կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Սեբաստիա 123 հասցեի մոտով անցնող  $D=50$ մմ պողպատե ջրագծի վրա: Տնտեսվել է  $Q=5$ լ/վ ջրաքանակ:





● Նուբարաշեն 1-ին փողոցում կատարած գոտիավորման աշխատանքների արդյունքում ներսրսկյան միջոցով փոխարինվել է նշված փողոցով անցնող D=100մմ պողպատե ջրագիծը D=63մմ ՊԷ խողովակով L=100մ երկարությամբ: Տնտեսվել է Q ≈ 5լ/վ ջրաքանակ:



### 3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները:

● **Քաղաք Վանաձորի** Լոռի ՋՄԿ-ում հեղուկ քլորի հնարավորինս անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով պատրաստվել է հենակ:



● **Քաղաք Շիրակի** Կապս քլորակայանում հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով փոխարինվել է հեղուկ քլորի ALLDOS փականը:

● **Քաղաք Վանաձորի** Կարմիր Աղեգի քլորակայանում հեղուկ քլորի հնարավորինս անվտանգ աշխատանքն ապահովելու համար պատրաստվել է հենակ:



● **Քաղաք Գավառի** Հացառատ ք/կ-ում հեղուկ քլորի հնարավորինս անվտանգ աշխատանքն ապահովելու համար պատրաստվել է հենակ:

● **Քաղաք Սիսիանի** Շաքե ք/կ-ում հեղուկ քլորի անվտանգ աշխատանքն ապահովելու համար ևս պատրաստվել է հենակ:



● **Քաղաք Երևան** Ավան Բարաչանյան 3/1 հասցեում վերանորոգվել են շարքից դուրս եկած հեղուկ քլորի սարքավորումները:



### 3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 35543 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը 11064-ն են: Երևան քաղաքի համար եղել է 8653 զանգ:

● Սեպտեմբեր ամսվա Երևան քաղաքի ցուցանիշը կազմել է 78.2 %, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2411 զանգ ( 21.8%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 24479 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 17346 զանգ (70.9%), իսկ մարզերինը՝ 7133 զանգ (29.1%):

#### 185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	<i>Ստորաբաժանում</i>	
<i>Առևտրային</i>	<b>Ընդամենը</b>	<b>11064</b>
	<b>ԵՐԵՎԱՆ</b>	<b>8653</b>
	<b>ՄԱՐԶԵՐ</b>	<b>2411</b>
<i>Շահագործում</i>	<b>ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ</b>	<b>24479</b>
	<b>ՀԱՐԱՎ</b>	<b>8783</b>
	<i>Շենգավիթ</i>	<i>1372</i>
	<i>Կենտրոն</i>	<i>1950</i>
	<i>Հյուսիս(Ավան, Նոր Նորք)</i>	<i>942</i>
	<i>Էրեբունի</i>	<i>2002</i>
	<b>Պոմպ</b>	<b>401</b>
	Սարգեր	2116
	<b>այդ թվում Կոյուղու վթար</b>	<b>67</b>
	<b>այդ թվում Դիտահորի խցանում</b>	<b>2022</b>
	<b>ՀՅՈՒՄԻՄ</b>	<b>15696</b>
	<i>Արաբկիր</i>	<i>3441</i>
	<i>Քանաքեռ-Զեյթուն</i>	<i>1790</i>
	<i>Մաշտոց</i>	<i>1727</i>
	<i>Շահումյան</i>	<i>2783</i>
	<b>Պոմպ</b>	<b>938</b>
	Սարգեր	5017
	<b>այդ թվում Կոյուղու վթար</b>	<b>99</b>
	<b>այդ թվում Դիտահորի խցանում</b>	<b>3205</b>
	<b>Ընդամենը</b>	<b>35543</b>

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Մեպտեմբերին Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ ուշադրության կենտրոնում է եղել հիմնականում Երևանում և մարզերում ՊԿՄՕ-ով կապալառու շինարարական կազմակերպությունների և ՎեոլիաԹիմի սեփական ուժերով իրականացվող աշխատանքները:

Ընդհանուր առմամբ ապահովվել է մոտ 20 հրապարակում, այդ թվում Երևանի մի շարք վարչական շրջաններում, Դիլիջանում, Գավառում, Էջմիածնում, Մասիսում, Աշտարակում:



Խոսքը մասնավորապես ջրի մաքրման կայանների վերակառուցման ու վերազինման, ջրագծերի ու կոյուղագծերի կառուցման, վթարների ու խցանումների վերացման, ջրաղբյուրների պոմպակայանների ու քլորակայանների վերանորոգման ու շահագործման, բակային պոմպակայանների արդիականացման, էլեկտրասնուցման համակարգի տեխնիկական սպասարկման մասին է:



Այս ուղղությամբ աշխատանքների լուսաբանման «մեխը» Տավուշի մարզում իրականացվող ծրագրերն են, որը եթե հեռարձակվեց «Կենտրոն» հեռուստաալիքով: Անդրադարձ կատարվեց մասնավորապես Դիլիջանում, Իջևանում և Բերդում տարվող աշխատանքների ընթացքին: Պարզաբանումներ ներկայացրեցին Բերդի փոխադաշապետը և «Բերդ» շահագործման տեղամասի պետը:

22 ՊՆ-ի կողմից անցկացված մարտական նախնական մասնակցությունը «Վեոլիա Թիմ» ընկերության աշխատակիցները կատարում էին միջամտական աշխատանքներ՝ իրենց աշխատանքները լավագույն կերպով կատարելու նպատակով: Վեոլիա Թիմի կողմից անցկացված աշխատանքները կատարվել են մասնավորապես Դիլիջանում, Իջևանում և Բերդում տարվող աշխատանքների ընթացքին: Պարզաբանումներ ներկայացրեցին Բերդի փոխադաշապետը և «Բերդ» շահագործման տեղամասի պետը:



ուցումը՝ 5 հրապարակում: Առաջին հերթին Դիլիջանում, որի շնորհիվ մակերևութային աղբյուրներից ջուր ստացող բնակավայրերում հաջողությամբ լուծվում է տասնամյակների պատմություն ունեցող ջրի որակի խնդիրը: Այսպիսով, հաշվետու ամսին զգալի գործ է կատարվել տարբեր ուղղություններով, որի մասին նաև կոչված են վկայելու հրապարակված հերթական «Մալաթիա» համատիրության շնորհակալագիրը ընկերությանը ցուցաբերած օգնության համար, Գավառի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջի գրառումը՝ քաղաքում Օպերատորի հետ համատեղ իրականացվող ծրագրի մասին: Դրանք ընթերցողին օգնում են պատկերացում կազմել

Վեոլիայի գործունեության ծավալների ու աշխարհագրության մասին, ինչպես նաև հերթական ինֆոգրաֆիկան բաժանորդների քանակի և կառուցվածքի վերաբերյալ:

Օպերատիվ լուսաբանված թեմաներից կարելի է առանձնացնել առաջինը՝ «Շոր-շոր - Երևան» մայրուղային ջրատարի պլանային կանգառի ժամանակ «Մաշտոց» շահագործման տեղամասի կողմից 3 տարբեր վայրերում միաժամանակ իրականացված աշխատանքները: Տվյալ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ ջրանջատումը ընդգրկում էր տասնյակ հազարավոր սպառողների, և որոշակի պարզաբանում էր պահանջվում կենցաղային անհարմարության պատճառների մասին:

Եվ երկրորդը՝ «Արզնի 2 - Երևան» ջրատարի վթարային վիճակը, որը օգոստոսի վերջին օրերին որոշակի խնդիրներ առաջացրեց Արաբկիրում: Իրավիճակը շտկվեց և ջրատարը վերագործարկվեց սեպտեմբերի 1-ին: Ցույց տալու համար ՎեոլիաԹիմի ջանքերը, ընկերության ֆեյսբուքյան էջում «Արզնի 2 - Երևան» ջրատարը վերաշահագործվեց» գրառման մեջ ընդգծվեց, որ «ՎեոլիաԹիմի մասնագետներն ամբողջ գիշեր աշխատել են, որպեսզի առավոտյան Արաբկիրում ջուր լինի»: Կից ներկայացվեցին գիշերային աշխատանքի լուսանկարները:

Մեպտեմբերին նշվել են նաև հանրային հնչեղություն ունեցող դեպքերը, իրադարձություններն ու տոները: Այսպես, հրապարակվել են գրառումներ ընկերության

«Վեոլիա Թիմ» ընկերությունը իրապարակել է իր սպասարկման տարածման մեքանիզմը բնակավայրերի ջրամատակարարման ժամանակացույցն առաջիկա 7 ամիսների համար:

2021 թ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2022 թ.-ի ապրիլի 30-ը ներառող ժամանակաշրջանը կազմվել է՝ հաշվի առնելով «Վեոլիա Թիմ» ընկերության ներկայիս սեփական հնարավորությունները և համապատասխանում է 22 համայնքի ծառայությունները կարգավորող համահամաձայնության կնիքի ջրի մատակարարմանը ներկայացվող պահանջներին:

Նշենք, որ դրանում արտացոլված է ջրամատակարարման ծրագրի մասին: Տեսնել ավելին



«Արզնի 2-Երևան» ջրատարը վերահանգործվեց

Արաբկիր վարչական շրջանի ջրամատակարարման աստիճանաբար վերակազմակերպում է:

ՎեոլիաԹիմի մասնագետներն ամբողջ գիշեր աշխատել են, որպեսզի առավոտյան հայտարարված ժամին արաբկիրցիները ջրի ինդիր այլևս չունենան:

ՎեոլիաԹիմ



AM

Խոսակցությունը ժամանակացույցում որպեսզի դրանք շտապարկներ են եղել

Ֆեյսբուքյան էջում Անկախության օրվա առթիվ, իսկ ամսի 27-ին անդրադարձ է կատարվել 44-օրյա Արցախյան պատերազմին ու դրան Վեոլիայի մասնակցությանը: Մասսայական դրական արձագանք է ստացել պաշտոնական գրառումն այն մասին, որ զինվորական հավաքների մասնակից ջրմուղագործների աշխատավարձերը պահպանվելու են:

Նաև հրապարակվել են ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարություններ:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](http://Veolia.am) պաշտոնական կայքում, [twitter.com/Veolia\\_AM](https://twitter.com/Veolia_AM) և [youtube](https://www.youtube.com/) Veolia Jur էջերում:

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



### 5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից ելնելով մշակվել է «Անվտանգության մշակույթ և երթևեկությունն աշխատավայրում» դասընթաց/պրեզենտացիայի նյութը:

### 5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ՈԱԱ բաժնին են ներկայացվել կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:


● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանուժներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

### 5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● «ԱԱ Միջազգային Շաբաթ-2021» միջոցառման ընթացքում սեպտեմբերի 20-ից 24-ն ընկած ժամանակահատվածում «Կյանքին սպառնացող Ռիսկերի հայտնաբերում» խաղ-վարժանքի շրջանակներում ՈԱԱ բաժնին Ընկերության ՀՏԿ-ներում, ստորաբաժանուժներում հայտնաբերեց «Բարձրությունից ընկնելու ռիսկեր», Ընկերության համապատասխան ստորաբաժանուժների հետ համագործակցելով շտկեց դրանք և վերջինիս վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն գետեղեց Գրուպի կողմից մշակված հատուկ թվային հարթակում:

● «ԱԱ Միջազգային Շաբաթ-2021» միջոցառման շրջանակներում Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «ԱՊՄ-ների, անվտանգության այլ միջոցների դերը և նշանակությունը: Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջները» դասընթացը Ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության Շիրակ տեղամասի 25 աշխատողի համար:

● Միաժամանակ ՎՊԿ տնօրինության և Ջրի որակի վարչության թվով 39 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Մասնագիտական ռիսկերն աշխատատեղում» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացները:



● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Վտանգավոր քիմիական նյութերի տեղափոխում, պահեստավորում և գործածում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով և հիմք ընդունելով Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և աղմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց

▶ «Քլորավորող օպերատորի մասնագիտական որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում՝ Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 14 աշխատողի համար


▶ «Վտանգավոր քիմիական նյութերի հետ աշխատանքին ներկայացվող ԲՌԿ ստանդարտի պահանջներ» առկա դասընթացը Ընկերության Տեխնիկական տնօրինության և ԿՄԿնՁՄ վարչության թվով 19 աշխատողի համար

«Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթացը Հնկերության ԿՄԿնԶՍ վարչության թվով 5 աշխատողի համար:



Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:

*2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍՀՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ*



**5.4. ԲՈՒԺՁՆՆՈՒՄ**

- Բաժինը, առաջնորդվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 27 մարտի 2003թ. N 347-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, 2021 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ «Մեդլայն» բժշկական կենտրոնի կողմից պայմանագրային հիմունքներով իրականացրել է Հնկերության խմելու ջրի մաքրման, վարակազերծման և ջրամատակարարման ցանցի սպասարկման աշխատանքներում անմիջականորեն ներգրավված համապատասխան մասնագիտությունների 645 աշխատողի առողջական վիճակի դիմամիկ հսկողության, վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածման կանխարգելման և հիվանդությունների հայտնաբերման նպատակով տարեկան պարտադիր թերապևտիկ զննություններ և լաբորատոր հետազոտություններ և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների վարման գործընթացը:
- Հնկերությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15/07/2004թ. N1089-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, պայմանագրային հիմունքներով «Բեռլին Պոլիկլինիկա», «Գուգարք Կենտրոնական պոլիկլինիկա», «Հրազդանի Բժշկական կենտրոն»



բուժհաստատությունների հետ համատեղ կազմակերպեց արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի փաստակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող Ընկերության թվով 107 աշխատողների համար բժշկական զննումներ (թերապևտի, նյարդաբանի, ակնաբույժի օտոլարինգոլոգի մաշկաբանի մոտ) և հետազոտություններ (ֆյուրոնկարահնում):

**5.5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻՆ-Ի ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ**

● Համաձայն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 24.12.2020 թվականի № ՄՈ/305-2020 որոշմամբ հաստատված ՀՀ Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջների՝ 2021 թվականի սեպտեմբերի 16-ին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Հարավ» շահագործման տնօրինության «Արտաշատ» շահագործման տեղամասի վթարային խմբը՝ ՈԱԱ բաժնի համակարգմամբ անցկացրել է «ԱԻ հետևանքով ջրատարի վրա առաջացած վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն, որի շրջանակներում պատրաստվեցին համապատասխան փաստաթղթեր (Զեկուցագիր, ՀՏՈԻ-ի անցկացման օրացույցային պլան, ՀՏՈԻ-ի անցկացման պլան, ՀՏՈԻ-ի ամփոփագիր) և տրամադրվեցին ՀՀ ԱԻՆ ՓՄ Արարատի մարզային փրկարարական վարչությանը:


● Համաձայն ՀՀ Լոռու մարզպետի 11.12.2020թ-ի 1074-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021թ-ի հիմնական միջոցառումների պլանի պահանջների՝ 2021թ-ի սեպտեմբերի 09-ին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Հյուսիս» Շահագործման Տնօրինության «Լոռի» շահագործման տեղամասը՝ ՈԱԱ բաժնի համակարգմամբ մասնակցեց հատուկ տակտիկական ուսումնավարժությունը՝ «Վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով:

**5.6. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ**

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայց Ընկերության թվով 2 ՕԿՁ-ում և 35 կառուցվածքային ստորաբաժանումներում: Ստուգայցի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

*2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների*



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## 6.1 ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Իրականացվել է Շիրակի 94 հասցեի տեսահսկման համակարգի արդիականացման աշխատանքներ, նախագծի պատրաստում և նախնական հաշվարկ:
- Տեղադրվել և շահագործման է հանձնվել Վճարային տերմինալներ “Idram”:
- Մեկնարկվել է ինդուստրիալ համակարգերի կիրեռ անվտանգության արդիականացման համար նախնական գործերի պլանավորման գործընթացը:
- “Վեոլիա” Խմբի IT անվտանգության կողմից ձեռնարկված “Top 25” ինդուստրիալ համակարգերի կիրեռ անվտանգության նախագծի շրջանակներում “Themis” համակարգում լրացվել է հարցաշար՝ ինդուստրիալ ոլորտի առկա կիրեռ ռիսկերի գնահատման և հետագա աշխատանքների ճանապարհային քարտեզի ստեղծման համար:
- Մասնակցություն է ցուցաբերվել “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և խմբի SS անվտանգության նախագծերը:
- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են անսարք մոնիտորներ և հնամաշ համակարգիչները:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Սպասարկվել է մոտ 280 զանգ IT բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել և փակվել է մոտ 410 աջակցության տոմս:
- ՀՕ ընկերության հետ համատեղ ուսումնասիրվել է՝ նոր սերվերային ապահովման հարցը:
- Իրականացվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի՝ Բաժանորդների տվյալների բազայի մուտքագրման բաժնի տեղափոխման աշխատանքներ:

## 6.2 ԻՆՏԵՐՆԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ

Սեպտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- SS վարչության աշխատակիցների ողջ խմբով անցկացվել են ամենօրյա խմբային քննարկումներ:
- Ինտերակտիվ համակարգում ստեղծվել է բջջային համակարգի կառավարման մոդուլ, որը հնարավորություն է ստեղծում ձևեր կառավարել և պահպանել ողջ պատմությունը, ինչպես նաև թույլ է տալիս կատարել փաթեթների ճշգրիտ վերաբաշխում, որի արդյունքում՝ «Բիլայն» ընկերությունը ճանաչվել է հաղթող և կնքվել է համաձայնագիր:
- Բոլոր բջջային հեռախոսահամարները տեղափոխվել են «Բիլայն» ընկերության սպասարկման ներքո, ավելացվել է խոսելաժամանակը, կատարվել են ծառայության բարելավման աշխատանքներ՝ միննույն ժամանակ նվազեցնելով ծառայության արժեքը:
- Համաձայնագրի շրջանակներում՝ «Բիլայն» ընկերությունը ծառայություն է մատուցելու ինչպես բջջային, այնպես էլ տելեկոմունիկացիոն այլ ոլորտներում: Այդ շրջանում հնարավորություն ստեղծվեց բյուջեն տնտեսել շուրջ 40 տոկոսով:
- Ինտերակտիվ համակարգի ակտեր բաժնում ներդրվել է ընկերության աշխատակիցների գույքագրման արխիվացման նոր մոդուլ, որտեղ պահպանվելու է ողջ պատմությունը:
- Ինտերակտիվ համակարգում ավելացվել է ջրաչափերի տրամագծի դիտման և խմբագրման հնարավորություն:
- Ինտերակտիվ համակարգում ստեղծվել է ջրանջատման հայտարարությունների նոր ծրագրային ապահովում, որի շնորհիվ բաժանորդները կարող են ծանուցվել, ջրանջատումների վերաբերյալ, ինտերակտիվ համակարգից:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել «ՀայՓոստ» ընկերության հետ՝ առցանց նոր վճարային համակարգի ինտեգրման ուղղությամբ:

● Ակտեր  
Ինտերակտիվ համակարգի միջոցով ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է սեպտեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

<b>Խախտման արձանագրություն</b>			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	16	23.7	3.7
Էրեբունի	27	18.6	3.2
Ծենգավիթ	5	1.0	0.2
Կենտրոն	6	3.1	0.6
Արաբկիր	12	7.3	1.3
Մաշտոց	3	11.5	1.8
Շահումյան	13	9.7	1.5
Քանաքեռ-Զեյթուն	6	2.7	0.5
ԱՎԲ	47	34.0	5.8
Լոռի	3	2.3	0.4
Ծիրակ	26	9.8	1.6
Արթիկ	5	2.0	0.4
Արարատ	10	1.1	0.2
Աբովյան	43	22.2	3.4
Հրազդան	14	11.9	2.1
Այսրան	2	0.7	0.1
Արտաշատ	17	2.5	0.4
Գավառ	7	1.4	0.2
Գորիս	2	0.8	0.1
Դիլիջան	1	0.2	0.0
Էջմիածին	4	2.3	0.4
Թալին	2	9.8	0.4
Իջևան	6	0.6	0.1
Կապան	2	0.8	0.1
Ճամբարակ	1	0.1	0.0
Մասիս	13	3.6	0.6
Մեղրի	1	0.3	0.0
Արմավիր	5	1.1	0.2
Աշտարակ	12	4.9	0.8
Զարենցավան	5	2.4	0.4
Սյիսակ	2	0.3	0.0
Ստեփանավան	2	1.0	0.2
<b>Ընդամենը</b>	<b>320</b>	<b>193.6</b>	<b>30.7</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է սեպտեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

<b>Լաբորատորիա</b>				
Տեղամաս	Միջամտություն		Մնասարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	6	5.27	30	6.77
Էրեբունի	4	4.58	9	0.07
Ծենգավիթ	1	0.18	24	6.20
Կենտրոն	5	2.64	16	0.11
Արաբկիր	4	2.05	47	1.73
Մաշտոց	14	5.97	42	4.92
Շահումյան	39	12.18	58	0.47
Քանաքեռ-Զեյթուն	4	3.01	14	1.22
Լոռի	9	1.33	17	0.07
Ծիրակ	13	3.97	22	4.30
Արթիկ	13	6.89	58	0.35
Արարատ	5	0.41	24	0.12
Աբովյան		-	8	0.03
Հրազդան	5	1.58	2	0.01
Սյավերդի		-	5	0.03
Սջոցք	1	0.52	1	0.00
Այսրան		-	16	0.20
Արտաշատ	5	1.46	28	0.25
Գավառ	6	3.34	10	0.06
Գորիս		-	11	0.07
Դիլիջան	3	0.92	6	0.02
Եղեգնաձոր		-	1	0.00
Էջմիածին	1	0.52	14	2.11
Թալին	1	24.18		-
Իջևան	4	0.43	8	0.04
Կապան	5	2.84	10	0.07
Ճամբարակ		-	1	0.03
Մասիս	6	2.81	21	0.13
Մարտունի		-	3	0.01
Արմավիր	3	1.55	11	3.56
Ջերմուկ		-	2	0.01
Սևան	3	1.55	9	0.07
Վայք		-	8	0.03
Աշտարակ	5	3.77	18	0.13
Միսիան		-	11	0.06
Սյիսակ	1	0.13	4	1.13
Ստեփանավան	1	0.26	2	0.05
Տաշիր		-	8	0.03
<b>Ընդամենը</b>	<b>167</b>	<b>94.31</b>	<b>579</b>	<b>34.49</b>



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am